

Թ Շ Ն Ա Մ Ի Ն Ե Ր

(Ա. Չեխովի)

Սեպտեմբերի մութ գիշերուայ ժամի 10-ին դիֆտերիտից զլխճանուկեց զեմատօլի բժիշկ Կիրիլովի միակ որդին՝ վեցամեայ Անդրէյը: Երբ բժշկի կինը չոքեց մեռած երեխայի մահիճի առաջ և բոլորովին անձատուր եղաւ յուսահատութեանը, նախասնեակում մէկը ուժգին զանգահարեց:

Դիֆտերիտի պատճառով ծառաներին դեռ առաւօտուանից հեռացրել էին տնից: Կիրիլովը, ինչպէս որ կար, առանց սերթուկի, բաճկոնի կոճակները բաց՝ թաց երեսն ու կարբոլեան թթուից այրուած ձեռքերն առանց սրբելու, գնաց անձամբ դուռը բացելու: Նախասնեակը մութն էր, կարելի էր միայն նկատել, որ ներս մտնողը միջահասակ էր, ունէր սպիտակ վըզնոց (պարանոցը փաթաթելու համար, որպէսզի չմրսի) և մեծ ու չափազանց գունատ դէմք, այնքան գունատ, որ կարծես այդ դէմքից նախասնեակը քիչ լուսաւորուեց:

—Բժիշկը տանն է,—շտապով հարցրեց ներս մտնողը:

—Սա տանն եմ,—պատասխանեց Կիրիլովը:—Ի՞նչ էք կամենում:

—Ա՛, այդ դէմք էք: Շատ ուրախ եմ,—ուրախացաւ ներս մտնողը և սկսեց փնտրել մթանը բժշկի ձեռքը, գտաւ և ուժգին սղմեց իր ձեռքերի մէջ: Շատ... շատ ուրախ եմ: Մենք ձեզ հետ ծանօթ ենք... Սա Արոգիինն եմ... բախտ եմ ունեցել ձեզ տեսնել ամառը՝ Գնուշուների մօտ: Շատ ուրախ եմ, որ տանը գտայ... Ի սէր Աստծոյ, մի մերժէք, գնանք ինձ հետ այս բոլորովին... Կինս վտանգաւոր կերպով հիւանդացել է... Սա կարող եմ...

Ներս մտնողի ձայնից և շարժումներից երևում էր, որ նա սաստիկ յուզուած դրուժեան մէջ է գտնուում: Հրդէհից կամ կատաղած շնից ասես վախեցած՝ նա հազիւ էր զսպում իր ստէպ շնչառութիւնը, խօսում էր արագ, դողդոջուն ձայնով, և նրա խօսքերի մէջ հնչում էր մի ինչ որ ոչ շինծու—անկեղծ, երեսայական փոքրոգութեան պէս մի բան: Ինչպէս բոլոր վախեցածները և գլուխ կորցրածները՝ նա խօսում էր կարճ-կարճ, հատուածօրէն և արտասանում էր շատ աւելորդ ու գործին չբարարեցող խօսքեր:

—Վախնում էի տանը չգտնեմ ձեզ.—շարունակեց նա: Մինչև հասայ ձեր տունը, հոգիս դուրս եկաւ... Հագնուեցէք, և գնանք, ի սէր Աստծոյ... Այսպէս պատահեց այդ: Եկաւ մեզ մօտ Պապչինսկին, Ալեքսանդր Սեմէօնիչը, որին դուք ճանաչում էք: Զրոյց արինք... յետոյ նստեցինք թէյ խմելու: Յանկարծ կինս ճչաց, բռնեց սիրտը և ընկաւ աթոռի մէջքի վրայ: Մենք տարանք նրան իր մահճակալի վրայ և... ես էլ քնեցրակները սկսեցի տրորել նաշատիւրի սպիրտով, էլ ջուր սկսեցի սրսկել վրան... պառկած է, ինչպէս մեռել... Երկիւղ եմ կըրում, որ դա երակների ընդլայնումից՝ անւերիզմից լինի... Նրա հայրը անւերիզմից մեռաւ:

Կիրիլովը լսում էր ու լռում, կարծես թէ ոռւսերէն չէր հասկանում:

Երբ Արոգինը մէկ էլ լիշեց Պապչինսկու և իր կնոջ հօր մասին և նորից սկսեց մթանը որոնել բժշկի ձեռքը, բժիշկը թափ տուեց պուխը և անտարբեր՝ ձգձգելով իւրաքանչիւր խօսքը՝ ասաց.

—Ներեցէք, ես չեմ կարող դալ... մօտ 5 ըրպէ սրանից առաջ իմ... որդիս մեռաւ...

—Մի՞թէ, մրմնջաց Արոգինը՝ մի քայլ յետ անելով: Աստուած իմ, ինչ վատ ժամի եմ եկել ես: Զարմանալի անբախտ օր... դարմացք է. որպիսի զուգատիպութիւն և կարծես թէ դիտմամբ...

Արոգինը բռնեց դռան փակը և մտքի յետ ընկած՝ զըլուխը կախեց: Երևում էր, որ նա տատանուում էր և չզրտէր ինչ անել, գնալ թէ շարունակել խնդրել բժշկին:

—Լսէք, տաքացած ասաց նա՝ բռնելով Կիրիլովի թևից: Ես շատ լաւ եմ հասկանում ձեր դրուժիւնը, Աստուած է վկայ, ես ամաչում եմ, որ այս ըրպէին ես աշխատում եմ գրաւել ձեզ ուշադրութիւնը, բայց ի՞նչ անեմ ես: Ինքներդ դատեցէք. ո՞ւմ մօտ գնամ: Զէ՞ որ այստեղ, բացի ձեզնից, ուրիշ ոչ մի բժիշկ չկայ: Գնանք, Աստծոյ սիրուն: Ինձ համար չեմ խնդրում: Ես չեմ հիւանդը:

Տիրեց լուսթիւն: Կիրելովը մէջըն արեց Արոգինին, մի փոքր մնաց կանգնած և յամբարայլ գնաց նախասենեակից դահլիճը: Նրա անհաստատ և մեքենայական քայլերից, դահլիճի չվառուած ճրագի բրդոտ լուսամփոփը ուշադրութեամբ ուղղելուց, սեղանի վրայ դրուած գրքի մէջ հարեանցի մտիկ անելուց կարելի էր ենթադրել, որ այդ ըոպէին նա չունէր ոչ մի դիտաւորութիւն, ոչ մի ցանկութիւն, նա ոչնչի մասին չէր մտածում և հաւանական է, չէր էլ յիշում, որ նախասենեակում օտար մարդ կայ կանգնած: Դահլիճի խաւարը և անդորրութիւնը, ըստ երևոյթին, սաստկացրին նրա շմածութիւնը: Դահլիճից առանձնասենեակը գնալիս նա ալ ոտը բարձրացնում էր աւելի բան պէտք էր, ձեռքերով փնտրում էր դռների շեմքերը, և այդ ժամին նրա ամբողջ կազմուածքի մէջ մի ինչ-որ վարանոտ բան էր երևում. կարծես անծանօթ բնակարան էր ընկել կամ թէ չէ՝ կեանքի մէջ առաջին անգամ խմել էր և այժմ շուարած տարուել էր իր այդ նոր զգացմունքից: Գրքերով լի պահարանների վրայով առանձնասենեակի պատի վրայ լոյսի մի լայն շերտ էր ձգուել. այդ լոյսը կարծովի ծանր ու խեղդող հոտի հետ միասին գալիս էր այն կիսաբաց դռնից, որը տանում էր առանձնասենեակից ննջարանը: Բժիշկը նստեց սեղանի առաջի բազկաթոռի վրայ, մի ըոպէ նա քնէած նայում էր իր լուսաւորուած գրքերին, ապա վերկացաւ և գնաց ննջարանը:

Այստեղ՝ ննջարանում մեռելային խաղաղութիւն էր տիրում: Բոլորը մինչև ամենավերջին չնչին իրը պերճախօս պատմում էին մի փոքր առաջ անցկացրած փոթորիկը, իրանց յոգնածութիւնը, և այդ բոլոր իրերը այժմ հանգստանում էին: Փայտէ աթոռի վրայ սրուակների և արկղիկների խառն բազմութեան մէջ դրուած մոմը և պահարանի վրայի մեծ ճրագը պայծառ լուսաւորում էին սենեակը: Մահիճի վրայ, պատուհանին կից, պռակած էր մանուկը բաց աչքերով և զարմացած դէմքով: Նա չէր շարժուում, բայց նրա բաց աչքերը, կարծես, իւրաքանչիւր վայրկեան աւելի ու աւելի մթնում ու փոս էին ընկնում: Մահճակալի առջև՝ ձեռքերը մանկան մարմնի վրայ դրած, երեսն անկողնու ծալքերի մէջ—չոքել էր մայրը: Նա էլ մանկան նման, իրան չէր գալիս, բայց նրա գալարուածքի և ձեռքերի մէջ որքան կենդանի շարժում էր երևում: Նա կպել էր մահիճից իր ամբողջ էութեամբ, ուժով և ագահութեամբ, կարծես երկիւղ էր կրում չլինի թէ իր խանգարի այն հանգիստ և յարմար դիրքը, որը տուել էր նա վերջապէս յոգնած մարմնին: Վերամակները, հին քրշերը, կոնքերը, տախտակամածի վրայի ջրերը, ամեն կողմ ցիրուցան արած վրձնիկներն ու զը-

դաշները, կրաջրի շիջը, հէնց այն խեղդող և ծանր օդը... Այդ բոլորը քարացել, կարծես՝ խոր քուն էր ընկղմուել:

Բժիշկը կանգնեց կնոջ մօտ, դրեց ձեռքերն անդրա-վարտիքի գրպանները և գլուխը մի կողմ թեքած, հայեացքն ուղղեց դէպի որդին. նրա դէմքը անտարբեր էր, միայն մորուքի վրայի պսպղացող ցօղից նկատելի էր, որ նա մի քիչ առաջ լաց էր եղել: Ննջարանում չկար այն վանող ահը, որի մասին մտածում են, երբ խօսք է ընկնում մահուան մասին: Այդ ընդհանուր քարացման, մօր դիրքի, բժշկի անտարբեր դէմքի մէջ կար մի ինչ-որ դէպի ինքը գրաւող, սրտաշարժ բան, և յիրաւի դա մարդկային վշտի այն նուրբ և հաղիւհազ ըմբռնելի գեղեցկութիւնն էր, որը՝ դեռ շատ կը տւէր, մինչև որ մարդիկ կարողանան հասկանալ և նկարագրել, և որը կարողանում է հաղորդել կարծեմ միմիայն երաժշտութիւնը: Թախծալից անդորրութեան մէջն էլ էր երևում գեղեցկութիւն: Կիրիւովը և նրա կինը լուռ էին, չէին լալիս, բացի կորուստի մեծութիւնից կարծես նրանք զգում էին և իրանց դրութեան ամբողջ լիրիզմը: Ինչպէս երբեմն, իր ժամանակին, անցաւ նըրանց երիտասարդութիւնը, այնպէս էլ այժմ, այս մանկան հետ յաւիտենականութիւնն էր գնում և նրանց երեխայ ունենալու իրաւունքը. բժիշկը 44 տարեկան էր, նա արդէն ճերմակած էր և ծերուկի էր նմանում. թառամած և հիւանդոտ կինը 35 տարեկան էր: Անդրէյը ոչ միայն մի հատիկ զաւակն էր, այլև վերջինը:

Հակառակ իր ամուսնուն՝ բժիշկը պատկանում էր այն տեսակ ընաւորութիւններին, որոնք հոգեկան տանջանքի ժամանակ շարժուելու պահանջ են զգում: Մօտ 5 բոպէ կնոջ մօտ կանգնելուց յետոյ նա աջ ոտը աւելի վեր բարձրացնելով՝ ննջարանից անցաւ փոքրիկ սենեակը, որը կիսով չափ բռնած էր մեծ ու լայն թիկնոցով. այստեղից նա մտաւ խոհանոցը: Պոհարարուհու անկողնու և վառարանի մօտ մի փոքր քարշ գալուց յետոյ՝ նա կռացաւ և փոքրիկ դռնով դուրս եկաւ նախասենեակը:

Այստեղ նա կրկին անգամ տեսաւ սպիտակ վզնոցը և գունատ դէմքը:

—Վերջապէս—հառաչեց Աբողինը, բռնելով դռան փակը, զնանք խնդրեմ:

Բժիշկը ցնցուեց, նայեց նրան և միտ բերեց.

—Բայց չէ՞ որ արդէն ասացի ձեզ, որ չեմ կարող գալ,— ասաց նա ոգևորուելով:—Որքան օտարօտի է այդ:

—Բժիշկ, ես քար չեմ, քաջ հասկանում եմ ձեր դրութիւ-

նը և յայտնում եմ ձեզ իմ ցաւակցութիւնը—ասաց աղաչանքով Արոգինը, ձեռքը վզնոցին դնելով, բայց չէ՞ որ ես ինձ համար չեմ խնդրում: Մեռնում է ամուսինս: Եթէ դուք լսէիք այն ձայնը, տեսնէիք նրա դէմքը, դուք կը հասկանայիք իմ յամուութիւնը. Աստուած իմ, իսկ ես կարծում էի, որ դուք գնացիք հագնուելու: Բժիշկ, ժամանակը թանգ է, գնանք: Խնդրում եմ:

—Ես գնալ չեմ կարող—ասաց Կիրիլովը՝ հատ-հատ արտասանելով բառերը և քայլեց դէպի դահլիճը:

Արոգինը գնաց նրա յետևից և բռնեց նրա թևքից:

—Դուք վիշտ ունէք, ես հասկանում եմ, բայց ոչ ատամ բժշկելու, ոչ էլ բժշկական զննութեան, այլ մարդկային կեանք փրկելու համար եմ հրաւիրում ձեզ ես—շարունակեց նա աղքատի նման աղաչել—այդ կեանքը իւրաքանչիւր անձնական կսկծից բարձր է: Դէհ, ես ձեզնից քաջութիւն, հերոսութիւն եմ խնդրում: Յանուն մարդասիրութեան:

—Մարդասիրութիւնը մի երկծայր փայտ է, գոգոտած ասաց Կիրիլովը: Յանուն նոյն մարդասիրութեան ես խնդրում եմ ձեզ չտանել ինձ: Եւ որքան օտարօտի է այդ, Աստուած վկայ: Ես հազիւ եմ ոտքի վրայ կանգնում, իսկ դուք մարդասիրութեամբ էք վախեցնում ինձ: Այժմ ես ոչ մի բանի պէտք չեմ... չեմ գնայ ես, ինչ էլ որ լինի. վերջապէս թե՛ յուսով թողնեմ կնոջս: Ոչ... ոչ...

Կիրիլովը թափ տուեց ձեռքերը և յետ-յետ քաշուեց:

—Եւ... էլ մի խնդրէք, շարունակեց նա վախեցած: Ներերեցէք ինձ: Օրէնքների XIII հատորի հիման վրայ ես պարտաւոր եմ գնալ և դուք ունէք իրաւունք քարշ տալ ինձ օձիքիցս: Համեցէք, քարշ տուէք. բայց ես անպէտք եմ... խօսել անգամ չեմ կարողանում... ներեցէք...

—Իդուր էք դուք, բժիշկ, ինձ հետ այդ ձևով խօսում, ասաց Արոգինը, կրկին անգամ բռնելով բժշկի թևքից: Տէրը XIII հատորի հետ: Բռնաբարել ձեր կամքը—ես ոչ մի իրաւունք չունիմ. կ'ուզէք գնացէք, չէք ուզի, Տէր ընդ ձեզ, բայց ոչ թէ ձեր կամքին, այլ ձեր զգացմունքին եմ դիմում ես: Մեռնում է մի ջահիլ կին: Հէնց նոր մեռաւ, ասում էք, ձեր որդին, թի ուրեմն, բացի ձեզնից, կարող է հասկանալ իմ սարսափը:

Արոգինի ձայնը դողում էր յուզմունքից, այդ դողողալը և խօսելու ձևը խօսքերից աւելի համոզիչ էին: Արոգինը անկեղծ էր, բայց զարմանալի է, ինչ խօսքեր էլ որ նա արտասանում էր, բոլորն էլ տաղտկալի, անշունչ և անտեղի ծաղկեցրած էին դուրս գալիս նրանից և կարծես թէ՛

մինչև անգամ անպատում էին թէ բժշկի բնակարանի օդը և թէ մի ինչ-որ տեղում մեռնող կնոջը: Նա ինքն էլ էր այդ դպում, ուստի, վախենալով, որ իրան չհասկանան, ամեն կերպ աշխատում էր մեղմութիւն, փաղաքշուութիւն տալ իր ձայնին, որպէսզի եթէ ոչ խօսքերով, գոնէ ձեռի անկեղծութիւնով ազդի: Ընդհանրապէս խօսքը, ինչքան էլ զեղեցիկ ու խորունկ լինի, ներգործում է միայն անտարբերների վրայ, բայց միշտ չի կարող բաւականացնել նրանց, որոնք բախտաւոր են կամ անբախտ. ուստի երջանկութեան և դժբախտութեան ամենազօրեղ արտայայտիչը շատ յաճախ լինում է լուութիւնը: Միրահարուածները աւելի լաւ են հասկանում միմիանց, երբ լուռ են, իսկ տաք և կրքոտ արտասանած դամբանականը ազդում է միայն օտարների վրայ, մեռնողի այրու կամ նրա երեխաների համար այդ դամբանականը սառը և անպէտք է թւում:

Կիրիլովը կանգնել էր և լուել: Երբ Աբողինը էլի մի քանի խօսք ասաց բժշկի բարձր կոչման, անձնազոհութեան մասին կայն... բժիշկը տխուր կերպով հարցրեց.

— Կեռու է գնալու տեղը:

— 13—14 վերստ հազիւ լինի. ես շատ լաւ ձիրերունիմ. ազնիւ խօսք եմ տալիս, ձեզ մի ժամում հասցնեմ ու յետ բերեմ: Միայն մէկ ժամ:

Վերջին խօսքերը բժշկի վրայ ներգործեցին աւելի, քան մարդասիրութիւնից և բժշկական կոչումից բերած վկայութիւնները. նա մի փոքր մտածեց և հառաչանքով ասաց.

— Լաւ, գնանք:

Նա արագ, բայց հաստատ քայլերով գնաց դէպի իր առանձնասենեակը և մի քիչ սպասելուց յետոյ վերադարձաւ երկար սերթուկով: Աբողինը, թեթև պտտուելով նրա շուրջը, ոտները շրխկացնելով, ուրախ-ուրախ սկսեց օգնել բժշկին հագնել վերարկուն և նրա հետ միասին դուրս եկաւ տնից:

Դուրսը մութն էր, բայց նախասենեակից լոյս էր: Պաւա-բի մէջ պարզ նշմարելի էր բժշկի երկար ու փոքր ինչ կորացած կազմուածքը երկայն ու նեղ մորուքով և արծել քթով դէմքը: Այժմ, բացի Աբողինի գունատ դէմքից, երևում էր և նրա մեծ գլուխն և ուսանողական փոքրիկ զլխարկը, որը հազիւ ծածկել էր նրա գագաթը: Վզնոցն առջևից էր միայն սպիտակին տալիս, իսկ յետևից նա ծածկուել էր երկար մագերի տակ:

— Հաւատացէք, ես կը կարողանամ գնահատել ձեր մեծահոգութիւնը, մրմնջում էր Աբողինը, կառք նստեցնելով բժը-

կին: Մենք շատ շուտ տեղ կը հասնենք: Իսկ դու, Բուկա, հոգիս, որքան կարելի է արագ քշիր խնդրեմ:

Կառապանը արագ էր քշում: Սկզբում ձգուած էին մի շարք աննշան շինութիւններ, որոնք ընկած էին հիւանդանոցի բակի երկարութեամբը. ամենուրեք մութն էր, միայն բակի խորքում՝ ում որ լուսամուտից, ծաղկանոցի միջով մի պայծառ լոյս էր անցնում, մէկ էլ հիւանդանոցի վերին յարկի երեք լուսամուտներն էին լուսաւորուած, որոնք օդից էլ դժգոյն էին երևում: Ապա կառքը մտաւ թանձր խաւարի մէջ. այստեղ օդը խոնաւ էր, և լսելի էր ծառերի սօսափիւնը: Ազուաները զարթնելով կառքի ակնբրի ձայնից՝ ծառերի տերևների մէջ իրար եկան և անհանգիստ ու դառնագին ձայն հանեցին, կարծես գիտէին, որ բժշկի որդին մեռել է, իսկ Արոզինի կինը հիւանդ: Բայց ահա տեղ-տեղ առանձին-առանձին ընկած ծառեր և թփեր սկսեցին երևալ: Տխուր կերպով փայլեց լճակը, որի վրայ երկար ստուերներ էին ընկած, և կառքը սլացաւ տափակ դաշտավայրով: Ազուաների աղմուկը այժմ դժուար էր լսուում, մնաց հեռու՝ յետևում և շուտով բոլորովին դադարեց:

Համարեա թէ ամբողջ ճանապարհին Կիրիլովը ու Արոզինը լուռ էին: Միայն մի անգամ Արոզինը խորը հոգոց հանեց և մըթմըթաց.

—Այ ծանր դրութիւն, երբէք այնպէս չես սիրում ըռ մտերիմներին, ինչպէս այն ժամանակ, երբ ահ ունիս կորցնել նրանց:

Եւ երբ կառքը հանգիստ անցնում էր գետով, Կիրիլովը յանկարծ սթափուեց, նրան կ'ասես ջրի շրփոցը վախեցրեց, և սկսեց տեղիցը շարժուել:

—Լսէք, թոյլ տուէք ինձ գնամ, ասաց նա թախիծով: Ես ձեզ մօտ յետոյ կը գամ: Ես կ'ուզէի գոնէ Ֆելդշերին ուղարկել կնոջս մօտ. ախր նա մենակ է:

Արոզինը լուռ էր կացել. կառքը իրար գալով և քարերին դիպչելով անցաւ աւազոտ ափը և շարունակեց ճանապարհը: Կիրիլովը տխրութիւնից սկսեց ձգձգուել և նայեց իր շուրջը: Յետևը՝ աստղերի նուազ լոյսի միջից երևում էին ճանապարհը և խաւարի մէջ կորած գետափի ուռենիները: Այլ կողմը հարթավայր էր, որն այնպէս հարթ և անսահման էր, որպէս երկինքը. դաշտավայրի վրայ՝ հեռուում, մերթ այստեղ, մերթ այնտեղ, հաւանականօրէն կիզակաւի ճահիճների վրայ աղօտ կրակ էր երևում: Դէպի ձախ՝ ճանապարհին գուզահեռաբար ձգուած էր բլուրը, որը ցածր թփերի շնորհիւ զանգրած և տեսք ունէր, իսկ բլրի վրայ անշարժ կանգնած էր մեծ կիսալուսինը, որը

կարմիր էր, փոքր ինչ մառախուղով ծածկուած և շրջապատուած մանր ամպերով, որոնք կարծես նայում էին լուսնուն չորս կողմից և հսկում էին, որ նա չը փախչի:

Ամբողջ ընուլթեան մէջ մի ինչ-որ անյուսալի և հիւանդ բան էր երևում: Գետինը, պոռնիկ կնոջ նման, որը մենակ նստած մութ սենեակում աշխատում է չմտածել անցեալի մասին, տողորում էր դարնան և ամառուան յիշողութիւններով և անտարբեր սպասում էր ձմռանը: Ուր որ էլ նայում ես, ընուլթիւնը մութ, անսահման խոր և ցուրտ փոսի էր նմանում, որի միջից կարծես չպէտք է դուրս գային ոչ Կիրիլովը, ոչ Արզգինը, ոչ էլ կարմիր կիսալուսինը:

Քանի կառքը մօտենում էր նպատակին, Արզգինը այնքան աւելի անհանգիստ էր դառնում: Նա իրար էր գալիս, վեր-վեր էր թռչում, նայում էր կառապանի ուսերի վրայով դէպի առաջ: Իսկ երբ, վերջապէս, կառքը կանգնեց զօլաւոր քաթանով գեղեցիկ զարդարուած պատշգամբի մօտին, և երբ նա նայեց երկրորդ յարկի լուսաւորուած լուսամուկներին, լսելի էր թէ ինչպէս դողում էր նրա շնչառութիւնը:

— Եթէ մի բան պատահի... ես չեմ դիմանայ, սպաց նա մտնելով բժշկի հետ նախասենեակը և շփոթուած շփելով ձեռքերը:— Բայց իրարանցում չի լսում, կը նշանակէ, առայժմ ամեն ինչ լաւ է— աւելացրեց նա, ականջ դնելով խաղաղութեանը:

Նախասենեակում ձայն ու ծպտուն չկար, և ամբողջ տունը կարծես քնած լինէր, չնայելով պայծառ լուսաւորութեանը: Հիմա Արզգինն ու բժիշկը, որոնք մինչև այժմ մթանն էին, կարող էին լաւ տնտղել մէկ մէկու: Բժիշկը բարձրահասակ էր, փոքր ինչ կորացած, հագնուած էր անփոյթօրէն և տգեղ դէմք ունէր: Նրա հաստ, նեզրի պոջները, արծւի քիթը, և թոյլ ու անտարբեր հայեացքը մի ինչ որ անախորժ, ծանր, դառն ու դաժան բան էին արտայայտում: Նրա չսանրած գլուխը, փոս ընկած քներակները, երկար ու նեղ մորուքի վաղորօք ալիտակացած մազերը, մորուքի մազերի արանքից շողողացող կզակը, նրա բաց-մոխրագոյն կաշին, անշնորհք ու կոպիտ շարժումները— այդ բոլորը իր բերտութիւնովը ցոյց էր տալիս, թէ ինչ կարօտութիւն և չարքաշ կեանք է անցկացրել նա, ինչպէս արդէն ձանձրացել է կեանքից ու մարդկանցից: Նայելով նրա ամբողջ չոր կազմուածքին, անհաւատալի էր թւում, որ այդ մարդը կարող է կին ունենալ և կարող է լալ երեխայի համար: Իսկ Արզգինը բոլորովին ուրիշ տպաւորութիւն էր գործում. սա մի հաստ ու պինդ, մեծ գլխանի, շիկահեր մարդ էր,

դէմքի խոշոր, բայց քնքոյշ գծազրութիւնով, մաքուր և վերջին տարազով հագնուած: Նրա իրան պահելը, կիպ կոճկուած սերթուկը, մազերն ու դէմքը ինչ որ վեհանձն և առիւծային տեսք էին տալիս նրան. ման գալիս գլուխը պահում էր ուղիղ, կուրծքը դուրս գցած, խօսում էր դուրեկան բարիտոն ձայնով, նրա շարժումների մէջ, երբ հանում էր վզնոցը կամ ուղղում էր գլխի մազերը, նուրբ և համարեա կանացի վայելչութիւն էր երևում: Նրա գունատութիւնը, մանկական ան անգամ, երբ վերարկուն հանելիս նայում էր սանդուղքին դէպի վեր, չէին փչացնում նրա իրանը, չէին նուազեցնում նրա ամբողջ կազմուածքից փչող կշտութիւնը, առողջութիւնը և ինքնահաւանութիւնը:

— Ոչ ոք չկայ, ոչինչ չի լսում—ասաց նա, բարձրանալով վերելեակը, իրարանցում չկայ: Տայ Աստուած:

Նախասենեակով նա բժշկին տարաւ մեծ դահլիճը, որտեղ սեին էր տալիս սև դաշնամուրը և որտեղ սպիտակ ծածկոցի մէջ կախ էր ընկած մեծ ջահը: Այստեղից նրանք երկուսով էլ անցան փոքրիկ, շատ յարմար սարքած ու գեղեցիկ ընդունարանը, որն ընկրմուած էր դուրեկան վարդազոյն կիսախաւարի մէջ:

— Դէհ նստէք այստեղ, բժիշկ. — ասաց Արոգինը, իսկ ես այս բոպէիս: Ես գնամ տեսնեմ և նախազգուշացնեմ...

Կիրիլովը մնաց մենակ: Ըստ երևոյթին, նրան բոլորովին չէր հետաքրքրում—ընդունարանի շքեղութիւնը՝ դուրեկան կիսախաւարը և մի ուրիշ անծանօթ տան մէջ գտնուելը, որը մի տեսակ արկածի էր նմանում: Նա նստել էր բազկաթոռի վրայ և նայում էր կարբոլեան թթուից այրուած ձեռքերին: Աչքի տակով միայն նկատեց վառ կարմիր լուսամփոփը, վրոնչելի արկղը, մէկ էլ աչքը ծոցե ժամացոյցի չխշկոցի կողմը, տեսաւ Արոգինի նման մի մեծ ու կուշտ գայլի մորթուց շինած խրտուիկակը:

Ամեն ինչ խաղաղ էր... Մի ինչ-որ տեղ, հեռու հարևան սենեակներում մէկը բարձր արտասանեց «ա՛» հնչիւնը, մի տեղ գրնդաց ապակեայ դուռը, երևի պահարանինն էր, և յետոյ էլի ամեն ինչ հանգստացաւ: Մօտ 5 բոպէ սպասելուց յետոյ Կիրիլովը վերջ տուեց իր ձեռքերին նայելուն և աչքերն ուղղեց դէպի այն դուռը, որից անցաւ Արոգինը:

Այդ դռան շեմքին կանգնած էր Արոգինը, բայց այն գընացող Արոգինը չէր: Կշտութիւնն ու նուրբ վայելչութիւնը նրանից անհետացել էին, նրա դէմքը, ձեռքերը, դիրքը—ծովառուել էին չգիտես սարսափի, թէ սաստիկ ֆիզիկական ցաւի

գարշելի արտայայտութիւնից. նրա քիթը, պոռնկները, բեխերը և նրա բոլոր գծերը իրար էին գալիս և թւում էր, որ աշխատում էին պոկ գալ նրա երեսից, իսկ աչքերը կարծես ցաւից ծիծաղում էին:

Արդգինը յամբ և մեծ-մեծ քայլերով եկաւ կանգնեց ընդունարանի մէջ տեղը, փոքր ինչ կռացաւ, ախ քաշեց և սկսեց թափ տալ բոռնցքները:

— Խաբեց—բղաւեց նա, շեշտելով «եց» վանկը: Խաբեց: Գնաց: Հիւանդացաւ և ինձ ուղարկեց բժշկի յետևից նրա համար միայն, որ ծաղրածու Պապչինսկու հետ փախչի. Տէր իմ:

Արդգինը յամբաքայլ գնաց դէպի բժիշկը, նրան մեկնեց իր փափուկ և սպիտակ բոռնցքները և թափահարելով՝ շարունակեց գոռալը.

— Գնաց. խաբեց: Բայց, ի՞նչի համար էր այդ խաբեքայութիւնը. Աստուած իմ, Աստուած իմ. ինչի՞ համար էր այդ կեղտոտ և խարդախ ֆոկոսը, այդ սատանեկան և օձի խաղը: Ի՞նչ էի արել ես՝ նրան: Գնաց:

Արտասուքը ցայտեց աչքերից: Նա շուռ եկաւ մի ոտի վրայ և սկսեց քայլել ընդունարանում. այժմ նա իր կարճ սերթուկով, մոդային նեղ անդրավարտիքով, որի մէջ նրա ոտները անհամեմատ բարակ էին երևում, իր մեծ գլխովն ու վարսով չափազանց նմանում էր առիւծի. բժշկի անտարբեր դէմքը հետաքրքրութիւնից փայլեց: Նա վերկացաւ տեղից և տնտղեց Արդգինին օտից գլուխ:

— Ներեցէք, իսկ ձեր է հիւանդը—հարցրեց նա:

— Հիւանդը, հիւանդը—ճշաց Արդգինը ծիծաղով ու լացով և շարունակելով թափահարել բոռնցքները: Նա հիւանդ չէր, այլ անիծե՛ալ արարած: Ստորութիւն, լրբութիւն, որից աւելի կեղտոտ իսկի սատանան էլ չէր կարող հնարել: Ինձ ուղարկեց, որպէսզի փախչի, որպէսզի այն ծաղրածուի, դատարկ կլոռնի, ալֆոնսի հետ փախչի. Աստուած իմ, աւելի լաւ կը լինէր, որ մեռնէր: Ես չեմ տանի այդ: Չեմ տանի!

Բժիշկը ուղղուեց: Նրա աչքերը սկսեցին թարթափել և արտասուքով լցուեցին, նրա նեղլիկ մորուքը ծնօտի հետ սկսեց աջ ու ձախ շարժուել:

— Ներեցէք—այդ ի՞նչ բան է.—հարցրեց նա, նայելով հետաքրքրութեամբ իր շուրջը. իմ երեխաս մեռած է, կսկծոտ կինս ամբողջ տան մէջ մնացել է մենմենակ, ես ինքս հազիւ եմ ոտքիս վրայ կանգնում, երեք դիշեր չեմ քնել... և ի՞նչ: Ինձ ստիպում են մի ինչոր լպիրշ կոմեդիայում դեր խաղալ, բուտաֆորի առարկայի դեր կատարել: Չեմ... չեմ հասկանում:

Արոգիքնը բաց արեց սղմած ավերից մէկը, գետին շալըրտեց մի ճմրթուած տոմսակ, որը նա տրորեց, ինչպէս միջատին են տրորում, երբ կամենում են սպանել նրան:

— Եւ ես չէի տեսնում... չէի հասկանում... ատամները սղմած ասում էր նա թափահարելով իր դէմքի մօտ բռունցքը և այնպիսի ոճով, որ կարծես թէ մէկը կխճորել է նրա ոտի կոշտը:— Ես չէի նկատում, որ նա գալիս էր մեզ մօտ ամեն օր, չնկատեցի, որ նա այսօր եկաւ մեզ մօտ փակ կառքով: Ինչո՞ւ փակ կառքով: Եւ ես չէի տեսնում. ես, տխմարս...

— Չեմ... չեմ հասկանում, մըմնջաց բժիշկը. ավրայս ի՞նչ բան է: Չէ որ դա մի ծաղր է մարդու անձնաւորութեան վըրայ, ծանակ է մարդկային ցաւերի վրայ: Դա անկարելի բան է. ես առաջի՛ն անգամն եմ կեանքիս մէջ տեսնում...

Շշմած մարդու պէս, որը հէնց նոր հասկացել է, որ իրան ծանր վիրաւորել են, բժիշկը շարժեց ուսերը, իրար տուեց ձեռքերը, և առանց իմանալու թէ ինչ անի և ինչ խօսի, թուլացած նստեց բազկաթոռի վրայ:

— Դէհ, էլ չես սիրում, սիրում ես ուրիշին— Տէր ընդ քեզ. էլ ինչի՞ համար է այդ խարեբայութիւնը, ի՞նչի համար է այդ ստոր և խարդախ արարքը— ասում էր Արոգիքնը լալազին ձայնով: Ի՞նչի համար, ի՞նչի համար, ի՞նչ եմ արել ես քեզ. լսէք, բժիշկ, տաքացած ասաց նա, մօտենալով Գիրիլովին: Դուք ակամայ վկայ եղաք իմ դժբախտութեանը, և ձեզնից ես չեմ ծածկի իսկութիւնը: Երդու՞մ եմ ձեզ, ես սիրում էի այդ կնոջը, սիրում էի երկիրդածօրէն, ինչպէս մի ստրուկ. նրա համար ես ամեն ինչ զոհեցի՛ խոռովեցի իմ ազգակիցներին հետ, թողեցի ծառայութիւնս, երաժշտութիւնը, ներում էի նրան այն, ինչ որ չէի ների մօրս, ոչ էլ քրոջս: Ոչ մի անգամ ես նրան խեթ աչքով չեմ նայել, ոչ մի առիթ չեմ տուել ես նրան: Ի՞նչի՞ համար է ուրեմն այդ կեղծիքը, ես սէր չեմ պահանջում, բայց ինչի՞ համար է ուրեմն այդ լպիւրջ սուտը: Չես սիրում, ասա ուղիղ՝ ազնւաբար, մանաւանդ որ գիտես այդ բանի մասին իմ ունեցած հայեացքը...

Արտասուքն աչքերին, ամբողջ մարմնով դողալով, Արոգիքնը անկեղծօրէն բաց էր անում իր սիրտը բժշկի առաջ: Նա խօսում էր տաք-տաք, ձեռքերը կրծքին դրած, առանց տատանուելու մերկացնում էր իր ընտանեկան գաղտնիքները և կարծես մինչև անգամ ուրախ էր, որ այդ գաղտնիքները վերջապէս դուրս թռան նրա սրտից: Եթէ նա շարունակէր այդպէս խօսել մէկ, երկու ժամ, եթէ դատարկէր նա իր սրտի բոլոր գաղտնիքները, անկասկած, նա կը թեթևանար: Ով

գիտէ, եթէ բժիշկը լսէր նրան և ընկերաբար կարեկցէր, գուցէ և նա, ինչպէս այդ շատ յաճախ պատահում է, հաշտուէր իր դարձի հետ՝ առանց բողոքելու և առանց աւելորդ յիմարուածիւններ անելու... Բայց ուրիշ կերպ դուրս եկաւ: Քանի որ Արոգինը խօսում էր, վիրաւորուած բժիշկը նկատելի կերպով փոխուում էր: Նրա դէմքի անտարբերութիւնն ու զարմանքը կամաց-կամաց տեղի տուեցին դառն վիրաւորանքի, վրդովմունքի և բարկութեան. նրա դէմքի գծերը աւելի խիստ, կոպիտ և աւելի անախորժ դարձան: Երբ Արոգինը մօտեցրեց նրա աչքերին մի ջահիլ կնոջ նկար՝ գեղեցիկ, բայց միանձնուհու չոր ու ցամաք դէմքով, և երբ նա հարցրեց՝ կարելի՞ է արդեօք այս դէմքը տեսնելիս ենթադրել, որ նա ընդունակ է ստեղու, բժիշկը յանկարծ վեր թռաւ տեղից, պսպղացրեց աչքերը և կոշտ ձևով շեշտելով իւրաքանչիւր խօսք՝ ասաց.

— Ինչի՞ համար էք այդ բոլորն ասում դուք ինձ: Ձեռ ուզում լսել: Ձեռ ուզում, ճշաց նա և խփեց սեղանին բռունցքով.— հարկաւոր չեն ինձ ձեր անարդ գաղտնիքները, ջհաննամը գնան նրանք: Մի համարձակէք այդ անարդ բաները պատմել ինձ: Կամ դուք կարծում էք, բաւական չէ՞ դեռ, որքան ես վիրաւորուած եմ. ի՞նչ է, ես լակէյ եմ, որին կարելի է մինչև վերջը վիրաւորել: Այո՞...

Արոգինը յետ-յետ քաշուեց Կիրիլովից և սկսեց զարմացած նայել նրան:

— Ինչո՞ւ դուք բերիք ինձ այստեղ, շարունակում էր բժիշկը՝ թափահարելով միրուքը: Եթէ դուք կշտուածիւնից ամուսնանում էք, կշտուածիւնից կատաղում էք և մեւտարամմաներ խաղում, ես ինչի՞ համար եմ այստեղ: Ի՞նչ ցաւ ունիմ ես ձեր ոտմանների հետ: Թողէք ինձ հանգիստ: Քաղաքավարի մուշտիկով սարքեցէք, ցոյց տուեցէք ձեր մարդասիրական գաղափարները, նուազեցէք (բժիշկը խեթ-խեթ մտիկ արեց վիոլոնչելի արկղին), նուազեցէք կոնտրաբասների և տրոմբոնների վրայ, գիրացէք, ինչպէս կրտած աքլորներ, բայց չհամարձակուէք ծաղրել մէկի անձնաւորութիւնը: Չգիտէք յարգել նրան, դռնէ ազատեցէք նրան ձեր ուշադրութիւնից՝

— Ներեցէք, ի՞նչ է նշանակում այս բոլորը, հարցրեց Արոգինը՝ կարմրատակելով:

— Կը նշանակէ, որ ստորութիւն, լրբութիւն է, երբ մէկի հետ այդպէս խաղ են անում: Ես բժիշկ եմ, դուք բժիշկներին և ընդհանրապէս այն աշխատաւորներին, որոնցից օժանկութի և պոռնկի հոտ չէ գալիս, ձեր լակէյներ և մովետոն էք հաշուում, այդպէս էլ հաշուեցէք, ոչինչ, բայց ոչ ոք ձեզ իրաւունք

չի տուել բարոյապէս տանջուող մարդուն բուտաֆորի առարկայ դարձնել:

—Ի՞նչպէս էք համարձակուում դուք ասել այդ ինձ, հարցըրեց հանդարտ ձայնով Արողինը. նրա դէմքը սկսեց նորից վեր-վեր թռչել, և այս անգամ պարզ էր, որ դա բարկութիւնից էր:

—Ոչ, ինչպէ՞ս դուք համարձակուեցիք, գիտե՞նալով իմ կսկիծը, բերել ինձ այստեղ ձեր անարգ պատմութիւնը լսելու համար, գոչեց բժիշկը, նորից զարնելով սեղանին բռունցքով: Ո՞վ է ձեզ իրաւունք տուել, որ այդպէս ծաղրէք ուրիշի վիշտը:

—Դուք խելագարուեցի՞ք—բղաւեց Արողինը... Դա մեծահոգութիւն չէ... Ես ինքս սաստիկ դժբախտ եմ. և... և...

—Դժբախտ է, արհամարհանօք փութկացրեց բժիշկը: Այդ բանը դուք մի ասէք, դա ձեզ չի վերաբերում: Դատարկապորաները, որոնք մուրհակով փող չեն գտնում, նոյնպէս իր բանց դժբախտ են կոչում: Կրտած աքլորը, որը ճաքում է իր չափից դուրս չաղութիւնից, նոյնպէս դժբախտ է: Անպէտք մարդիկ!

—Մեծապատիւ պարոն, դուք ձեզ մոռանում էք!—ծղրտաց Արողինը:—Այդ խօսքերի համար... ծեծում են, հասկանում է՞ք:

Արողինը շտապ շտապ ձեռքը տարաւ ծոցաջէքը, հանեց այնտեղից քսակը և երկու թուղթ փող հանելով նրա միջից, շարտեց սեղանի վրայ:

—Ահա ձեր այցելութեան համար—ասաց նա՝ շարժելով բթածակերը—դուք վարձատրուած էք!

—Չհամարձակուէ՞ք դուք փող առջարկել ինձ—ճչաց բրժիշկը և սեղանի վրայից փողը վայր սրբեց գետին: Վիրաւորանքի համար փողով չեն վճարում:

Արողինն ու բժիշկը կանգնել էին միմիանց դէմ յանդիման և բարկացած՝ շարունակում էին մէկ մէկու անարժան վիրաւորանքներ հասցնել: Կարծեմ նրանք երբէք իրանց կեանքում, մինչև անգամ գառանցելիս էլ այդքան անարդար, անզուժ և դատարկ բաներ ասած չկային: Երկուսի մէջ էլ շատ ուժեղ կերպով նկատուեց դժբախտի եսը: Դժբախտները եսասէր են, չար են, անարդար են, անզուժ են և ապուշից էլ պակաս ընդունակ են հասկանալու մէկ մէկու: Դժբախտութիւնը մարդկանց չի միացնում, այլ անջատում է: Եւ մինչև անգամ երբ կարծես միատեսակ դարդ ունեցող մարդիկ պիտի միանան միմիանց հետ, այն ժամանակ աւելի շատ անարդար

և անօգուտ գործեր են գործուում, քան համեմատաբար երջանիկներն են անում:

— Համեցէք, ինձ տուն հասցրէք— գոչեց բժիշկը շնչակտոր:

Արոզինը ուժգին զանգահարեց: Երբ նրա կանչելուն ոչ ոք դուրս չեկաւ, նա նորից զանգահարեց և բարկացած դցեց զանգը գետին. զանգն ընկաւ գորգի վրայ և մի դառն, հոգեկան հառաչանքի պէս ձայն հանեց: Եկաւ լակէյը:

— Ո՞ւր էք կորել, ջհաննամն երթաք դուք, յարձակուեց նրա վրայ նա, սեղմելով բռունցքները: Ո՞րտեղ էիր այս բողբոջիս: Կորիր, և ասա, որ այս պարոնի համար բերեն կառքը, իսկ ինձ համար պատուիրիբ պատրաստեն փակ կառքը: Սպասիր, գոռաց նա, երբ լակէյը շուռ եկաւ գնալու: Եգուց դաւաճաններիցդ ոչ մի հատն էլ չմնայ իմ տանս. բոլորդ էլ դուրս կորէք, նորերին եմ վարձելու, զգուելի արարածներ!

Արոզինը և բժիշկը սպասում էին կառքերին ու լուռ էին կացել: Առաջինը նորից սկսեց փայլել իր կուշտ դէմքով և նուրբ վայելչութիւնով. նա քայլում էր ընդունարանում, վայելուչ ձևով շարժում էր գլուխը, և պարզ էր, որ մի ինչ-որ բան էր մտածում անելու. նրա բարկութիւնը դեռ չէր իջել, բայց նա աշխատում էր ցոյց տալ, որ իր թշնամուն չի նկատում: Իսկ բժիշկը կանգնած էր, մի ձեռքով կռթնել էր սեղանի կողքին և խոր, մի տեսակ ցինիկ և տգեղ արհամարհանքով նայում էր Արոզինին այնպէս, ինչպէս միայն կարող են նայել վիրտն ու չքաւորութիւնը, երբ իր առջև տեսնում է կուշտ ու վայելուչ մարդու:

Մի փոքր սպասելուց յետոյ, երբ բժիշկը նստեց կառքը և գնաց, նրա աչքերը դեռ շարունակում էին արհամարհանքով նայել: Մուկն էր, աւելի մուկը, քան մի ժամ առաջ. կարմիր կիսալուսինն արդէն մտել էր բլրի յետևը, նրան հսկող խաւար ամպերը պատ-պատ ընկել էին աստղերի շուրջը: Փակ կառքը կարմիր ճրագներով գոռաց ճանապարհին և տուաւ բժշկի առաջը: Դա Արոզինն էր. գնում էր բողբոջու և յիմարութիւններ գործելու...

Ամբողջ ճանապարհին բժիշկը մտածում էր ոչ իր կնոջ, ոչ էլ Անդրէյի, այլ Արոզինի և այն մարդկանց մասին, որոնք ապրում էին այն տանը, որից նա հէնց նոր հեռացաւ. նրա մտքերը անարդար էին ու տմարդօրէն անզուժ. նա մեղադրում էր Արոզինին էլ, նրա կնոջն էլ, Պապչինսկուն էլ, այն բոլորին, որոնք ապրում են վարդազոյն կիսախաւարում և որոնցից օժանելիքի հոտ է փչում. ամբողջ ճանապարհին նախա-

տուժ էր նրանց և անարգում մինչև իր սրտի խորքը. նրա ուղեղի մէջ այդ տեսակ մարդկանց մասին մի հաստատ համոզմունք կազմուեց:

Կ'անցնեն տարիներ, կ'անցնի և Կիւրիլովի կսկիծը, բայց այդ անարդար՝ մարդկային սրտին անարժան համոզմունքը չի՞ անցնի և կը մնայ բժշկի ուղեղի մէջ մինչև նրա գերեզմանը:

Թարգմ. րժ. Ա. Մ.